ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ դպրոցականներ և ուսանողներ, ուսուցիչներ ու դասախոսներ, հանրակրթության ոլորտի աշխատողներ.

Շնորհավորում եմ ձեզ Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ: Այս օրը հատկապես բացառիկ է մեր առաջին դասարանցիների համար, ովքեր առաջին քայլերն են անելու դեպի դպրոց և բացահայտելու են գիտելիքների նոր ու զարմանահրաշ աշխարհը, քանզի գիտելիքը աշխարհի ամենահզոր զենքն ու գործիքն է յուրաքանչյուր անհատի և հասարակության համար: Ջերմորեն շնորհավորում եմ նաև բուհի շեմն առաջին անգամ ոտք դնող մեր ուսանողներին նրանց մաղթելով լուսավոր ճանապարհ և բարձր առաջադիմություն:

Շնորհավորում եմ նաև մեր սիրելի ուսուցիչներին և դասախոսներին, ում վստահված է սերունդների ազգային կրթության և հայեցի դաստիարակության հայրենանվեր դժվարին գործը: Սիրելի մանկավարժներ, մաղթում եմ ձեզ հաջողություններ, ձեր շնորհակալ և պատվաբեր աշխատանքում:

Մեկ անգամ ևս շնորհավորելով բոլորիս Գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ՝ մաղթում եմ արգասաբեր ու հաջողություններով լեցուն ուսումնական տարի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ